ՏԵՂԵԿԱՆՔ

ԱՀ-ում 2022թ. դեկտեմբերի առաջին տասնօրյակում դիտված օդերևութաբանական պայմանների վերաբերյալ

Դեկտեմբերի 1-ին, 3-7-ին շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ, 4-6-ին տեղումները դիտվել են թաց ձյան և ձյան տեսքով: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Մարտունիում՝ 16մմ, Մարտակերտում և Ասկերանում՝ 15մմ, Ստեփանակերտում՝ 6մմ: Նախալեռնային շրջաններում դեկտեմբերի 4-6-ին ձյան ծածկը կազմել է 0-1սմ: Հանրապետության տարածքում 5-6 օր դիտվել է մառախուղ մինչև 500մ տեսանելիությամբ:

Օդի միջին տասնօրյակային ջերմաստիճանը Ստեփանակերտում եղել -0.1^{0}C, նորմայից ցածր 3.4^{0}C-ով, Ասկերանում՝ +1.6^{0}C, Մարտունիում՝ +2.1^{0}C նորմայից ցածր 2.5^{0}C-ով և Մարտակերտում՝ +3.0^{0}C:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է դեկտեմբերի 2-3-ին և 9-10-ին՝ +4...+6^{0}C:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է դեկտյեմբերի 6-ին և 10-ին ՝ -1... -3^{0}C:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը իջել է մինչև 0.... +1^{0}C, առավելագույնը բարձրացել մինչև՝ +8....+9^{0}C:

Դեկտեմբերի առաջին տասնօրյակում քամու միջին արագությունը հասել է 1-2 մ/վրկ, պոռթկումները մինչև՝ 7-10 մ/վրկ արագությամբ:

Օդի միջին տասնօրյակային հարաբերական խոնավությունը կազմել է 89-91%: